

ԱՐՕՏ

ՀԱՐԻՒՐԴ ՏԱՐԻ
ԹԻՒ 6.

ԱՄՍԱԳԻՐ

ՑՈՒՆՎԻՍ 30.
1869.

ԱԶԳԱՑԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԳԻՏԱԿԱՆ

ԽՆԴԻՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ

Մեր ապգը թադէոս և Բարդուղիմէոս առաքելոց տրժանաւորյայտնորդ ասրբ Գրիգոր լուսաւորչէն սկսած մինչեւ Քրիստոսի 1113 թուականը ունէր մի կաթողիկոսութիւն, յիշեալ թուականին յաւելաւ Աղթամարայ կաթողիկոսութիւնը Դաւթի կաթողիկոսութեամբ, իսկ 1442 ին յաւելաւ Սսոյ կաթուղիկոսութիւնը Ս. ուսանելեաց Գրիգոր կաթողիկոսի օրով. և այսպէս Աղգը ունեցաւ երեք կաթողիկոսութիւններ, որոնք մինչև յայսօր անընդհատ կը տեւեն։ Այս կաթողիկոսական երեքութիւնն. և տեւողութիւնն պատմաւոր գիրք ասելիան չէ, այլ ըստ ամենայնի պատմական, որուն վրայ մի հատուածս տեսութիւն առնել պատշաճ կը համարիմք։

Քանի որ մեր Աղգը իր հայրապետութեան հետ ունէր միանգամայն և իւր քաղաքական ազատութիւնը, կաթողիկոսական բաժանումներ չը կային։ Այս երբոր ազգային քաղաքական ամէն բազմութիւնը սկսաւ քայքայիլ գրաբար ազգաց յարձակումներէն և հարաւահպատութիւններէն, երբոր ազգ տարին և ներքին խռովութիւնները բազմացան, քաղաքական միութեան կեդրոնի խռխռուելուն հետ հայրապետական միութեան կեդրոնն ևս խախտեցաւ, որ Լիմիանի կամ Այրարատեան մայր Աթոռն ելք։ Այս ազգ խաչահատուածն օրերուն մէջ կաթողիկոսական Աթոռն ապրեցաւ փափաքելով քաղաքի քաղաք և ասեն քանի լեռն, և ժողովրդաւոր կաթողիկոսանիստ

digitised by A.R.A.R.@

իրն և սկսան ժողովրդեան հետ ազատական թափուիլ։ այս տխուր տարաբաղդութեան տխուր պատկերն է զոր կը ներկայացնէ Եղիսէ Շնորհալին Ընդհանրականին մէջ ասելով. «Եւ քաջաւք թագաւորական և բազմաժողով՝ ոչ գոյ ազգի մերում՝ որպէս զի անդանօր նստելով յաթոռ հայրապետութեան և վարդապետութեան՝ ուսուցանէաք ժողովրդեան մերոյ զաստուածային պատուիրանս, ըստ առաջին հայրապետացն եւ վարդապետաց։ Այլ եմք իբրև զայծեամն յորսորդաց և ի շանց փախուցեալք ի քարանձաւս յայս բնակելով, յորում՝ ոչ և մարմնական հարկաւոր պիտոյիք շատացեալք ի գիւղից, կամ յագարակաց, յորոց ունիմք և ոչ մի»։

Կաթողիկոսական Աթոռոյ փոխադրուած գլխաւոր տեղերն էին Դուին Անի, Թաւ բլուր, Սեաւ լեռն եւ այլն։ Արդարև՝ այս փոխադրութեանց ժամանակ քանի մի հակաթոռ կաթողիկոսներ ի վեր երեւեցան, և նա եւ միայն 1085ին չորս սնձինք կաթողիկոսական անուն կը կրէին՝ Գրիգոր վանայասէր ի կողմանս Տարսոնի, սէր Խարսեղ. Անի, տէր Թէոդորոս ի Հանի և տէր Պօղոս ի Սանաստ։ Սակայն այս հակաթոռութիւնները ժամանակաւոր դիպուածներ էին, առանց տեւականութեան, ինչպէս և կային այն օրինակ դէպքեր սուրբ Սահակ Պարթեւի հայրապետութեան ժամանակ։ Իսկ Աղթամարայ և Սոյ կաթողիկոսութիւնները ոչ թէ հակաթոռական, այլ ինչպէս ասացինք բաղարոնի պատմական պարագաներէ յառաջ եկած են և իրենց յարատեւութեան բուն պատման եւ ազգային պատմական վիճակի արդիւնքն է։

Ինչդեռ Աբրահամեան Աթոռը Սիսիկիայի լերանց վրայ կը պանդխտէր, Աղթամարայ մէջ, (որ իւր կղզիական դրութիւն ասելի ապահովութիւն ունէր արտաքին յարձակումներէ,) Աղթամարական կաթողիկոսութիւնը սկզբնաւորեցաւ. և մինչդեռ Սիսիկիայի մէջ կաթողիկոսութիւնը կը տարուբերէր մի կողմէն Եգիպտական Սուլթանաց հարատահարութեանց տակ և միւս կողմէն ծփալով պապական պահանջումներու և դաւանաբանական վէճերու մէջ, այս քաղաքական և կրօնական տրտաքին ներքին խռովութեանց մէջ ժամանակ չունէր մինչև արեւելեան և հիւսիսային հայկական հօտը տարածել իւր հովուական խնամքը, Չէմիածնի մէջ Գիրակոս Վիրապեցին կաթողիկոս քնարուեցաւ և Սիսիկիայի մէջ եւս կաթողիկոսութեան շարունակութիւնը անխուսելի մնաց Գրիգոր Սուսաբէկեանի օրէն, և հետեւապէս մեր Ազգը երեք կաթողիկոսութիւն ունեցաւ, Չէմիածնի, Աղթամարայ և Սիսիկիայի։ Այս երեքնութիւնը, որովհետեւ ազգային պատմական կենաց հետեւանք էր և ոչ թէ կրօնական բաժանման, տեւեցաւ և կը տեւէ մինչև մեր օրերը։ Կաթողիկոսական երեքնութեան պատճառաւ երբէք ազգային կրօնական միութիւնը չը խախտեցաւ և երբէք կաթողիկոսութեան հետ հպատակներուց եկեղեցին միշտ մնաց մի։ անանց որ և իցէ ծիսական կամ առանձնական փոփոխութեան կամ երկպառակութեան։ Չէմիածնի կաթողիկոսութիւնը միշտ ընդհանուր ազգային անուն կրեց։ որոյ աթոռակալաց ընտրութեանը բազմիցս մասնակից եղան նոյն իսկ Աղթամարեան եւ Սիսիկեան կաթողիկոսական վիճակաց եկեղեցականները և աշխարհականները։ իսկ Սիսիկիայի և Աղթամարայ կաթողիկոսութիւնները միշտ տեղական մասնաւոր անունը կրեցին։

digitised by A.R.A.R.@

Ազգային պատմական վիճակը, Վիլկիոյի և Աբարատոյ հեռաւորութիւնը, Աղթամարայ կղզիական դիրքը, տարբեր տիրապետաց հակակրութիւնները և հետեւապէս ազգային հաղորդակցութեան դժուարութիւնները այսպէս արտադրեցին և այսպէս մնաց կաթուղիկոսութիւնը մինչեւ 1865 թուականը։ Այս թուականին Վիլկիոյի կաթողիկական խնդրոյն հետ յուզուեցան Աղթամարայ ոս Սոյ խնդիրներն եւս։ Ազգը խիստ մեծ եռանդով գրկեց կաթողիկութեանց խնդիրը և իրաւամբ ինքնական ինդիր անուանեց։ Կեդրոնական վարչութեան ընդհանուր ժողովը քանի մի վայելուչ նիստեր ասն խնդրոյն համար զբաղեց և յանձնեց կաթուղիկոսական յատուկ Անանաժողովի, որ իր կողմէն Տեղեկագիր պատրաստեց եւ ընդհանուր ժողովին ներկայացուց և հաւանութիւն ստացաւ։ Բայց, ի ցաւ սրտի ամենայն բարեմտաց, խնդիրը մինչեւ այս կէտը միայն հասաւ և կանգ առաւ, ուստի և Տեղեկագրի եզրակացութիւնքը, իբրեւ ձայն բարբառոյ յանապատի, մնային և կը մնան ասկաւբուն. և որովհետեւ իւրաքանչիւր բարոյական զանցառութիւն իւր տիսուր հետեւանքն ունի, այս կաթողիկոսական խնդրոյն զանցառութեան հետեւանքն եւս եղաւ Աղթամարայ և Սոյ կաթողիկոսութեանց նկատմամբ յուզուած նախատական իրողութիւնները, վասն զի խնդիրը բոլորովին անձնականի փոխուելով և Խաչատուրի ու Վիլկիոյոսի խնդիր դառնալով՝ շեղեցաւ իւր նպատակէն Կարմելով կը պարտաւորինք խոստովանիլ, որ Աղգը իւր զանցառութեան պատիժը կրեց, ինչպէս պիտի կրէ անշուշտ և ամէն զանցառութեանց և անհոգութեանց պատիժ։ Թէ ինչ են կաթողիկոսական խնդրոյ նկատմամբ եղած զանցառութիւնները, ամենը բանիմաց ընթերցող կարող է խնամատարել, եթէ 1865 և 1866 թուականներու ընդհանուր Ժողովի քանի մի նիստերը հաճեմատէ յաջորդ տարիներու ժողովական նիստերու հետ։ Թէպէտ և երբեք կաթողիկոսութեանց խնդիրները իրարու հետ սերտ կապակցութիւն ունին, բայց մենք այժմ պիտի խօսինք միայն Աղթամարայ և Սոյ կաթողիկոսութեանցմասին, որովհետեւ կաթողիկոսական Անանաժողովոյ Տեղեկագրին մէջ արդէն քաւական խօսուած է Վիլկիոյի կաթողիկոսութեան նկատմամբ։ Մենք պիտի խօսինք Աղթամարայ և Սոյ կաթողիկոսութեան վրայ, ասկայն, մեր սկզբունքին համեմատ, մեր խօսելուս առարկան նոյն կաթողիկոսութեանց բուն էութիւնը պիտի լինի և ոչ թէ այս ինչ կամ այն ինչ մարդու անձնաւորութիւնը։ Հետեւապէս պիտի խօսինք նախ նոյն կաթողիկոսութեանց ներկայ վիճակին վրայ, երկրորդ նոցա կարեւորութեան վրայ և երրորդ նոցա առ Ազգային Պարտութիւնն և առ Վիլկիոյի կաթողիկոսութիւնն ունեցած յարաբերութեանց վրայ։

Սոյ և Աղթամարայ կաթողիկոսութեանց ներկայ վիճակը ստուգապէս կշռադատելու համար՝ կարեւոր է տեղական ժողովրդի վիճակը աչքի առջեւ բերել։ Եթէ կաթողիկոսութիւնը մի բարոյական և կրօնական տեսչութիւն է ժողովրդի վրայ, անշուշտ իւր վիճակը կը չափուի ժողովրդեան վիճակէն։ Ինչ է Աղթամարայ և Վիլկիոյի ժողովրդեան ներկայ վիճակը բարոյապէս և մտաւորապէս առնելով։ — Անկրթութիւն, տգիտութիւն, և՝ թէ չամաչենք ասել, կատարեալ կոպտութիւն։ Հետեւապէս Աղթամ-

digitised by A.R.A.R.@

մարդոց և Կիլիկիայի կաթողիկոսութիւնները ցարդ ժողովրդի բարոյական և մտաւորական կենաց վրայ ազդեցութիւն ունեցած չեն և իրենց տեսչութիւնը ոչ միայն հոգեւորական կամ վանական ջրջանաւորն անցած և ժողովրդին հասած չէ. այլ դժբաղդաբար նոյն իսկ կաթողիկոսաց կամ աթոռատեղիքն անդամ ամենքս թեան մէջ անարգարդութեան մէջ են, թէ ներքուստ և թէ բարոյական ոգեաց։ Այս տխուր վիճակի պատճառն որոշապէս որ մի կողմէն եղած են արտաքին պարագաներ և հաստատակորութիւնները։ որ անընդհատ շարունակուած են մինչեւ ներկայ գարը։ բայց ինչպէս լինելով համարեա թէ ամէն տեղերու՝ այնպէս, միւս կողմէն եւս եղած են ներքին պատճառներ։ կաթողիկոսական հանգիստ ընտրութեանց բերանները։ որով յաջողութիւնք ներքին շինածը ոչնչացնելու։ Ճանաչած է. անկասկած և անհերքելի ստուգութեան անտեսութիւնները։ թաղանք ասել աբրիշ թերութիւնները, որոնք ծանր են լսելեաց։ Այնպէս որ թէ և յիշեալ կաթողիկոսութիւնները երկար դարերէն ի վեր տեւած են և կը տեւեն տակաւին, այնուամենայնիւ. ճիշդը խոստովանիլ, իրենց տեսչութիւնը լոկ անուանական եղած է և ոչ իրական։ Իսկ այսօր նոյն կաթողիկոսութիւնները իրենց մեծ նպատակին վերադարձելու համար՝ հարկաւոր է մեծ բան նորէն սկսել։ վասն զի կաթողիկոսութիւնն մի միայն ձեռնադրութեան, միւռոնի օրհնութեան, մկրտութեան։ պատկերի և թաղման հանդիսաստարութեանց մէջ չը կայանար։ այլ ժողովրդին լուսաւոր և գիտութեան ճանապարհաւորութեան դաստիարակութեան մէջ։ Այս լուսաւոր և գիտութեան պակասութիւնն է որ ժողովրդի նիւթական վիճակն եւս վերջին աստիճանի իջնելու թեան է հասած։ կ'անարգեն՝ չը գրպաս և չը պաշտպաներ. իւր պատիւը. կը հարստահարեն՝ ոչնչարի պէս անմարդանց կը մնայ։ որովհետեւ իւր իրաւունքը ճանաչելու և պաշտպանելու գիտակցութիւնը չունի։ ամենն հոգմերէ կը սասանի, ամենն երաշներէ կը տատանի և կ'ապրի ազգութեամբ։ եթէ ապրիլ կարելի է ասուանալ այս տեսակ կեանքը։ Այս է Աղթամարայ և Սիսոյ կաթողիկոսութեանց ժողովրդի ներկայ վիճակը։ որ եթէ առաջին ժամանակներուն մէջ զգալի չէր։ այժմ խիստ զգալի և շոշափելի է ամենն վրայ՝ ի չարաբ խոր հազ Հայոց համար։ Աղթամարայ ժողովրդը մեծ մասամբ քրիստոնեութեան տակ կը հնծէ և բարոյապէս աղերսալի վիճակի մէջ է։ Իսկ Սիսի կիսայի ժողովրդը ամենեւին չը հանդարտուխաներ այն մեծահնչեան գործեսութիւններուն։ որ իւր վրայ կը հնչակուէր։ վասն զի այն հայութիւնը։ սեր լեզուի, կրօնի և ազգութեան գիտութիւնը խորին խաւարի մէջ է։ աւելի ցաւակցութեան և ողբալու կարօտ է. քան թէ գովասանական անհիմն ներբողներու։ Ի՞նչ սիրտ հետեւցնենք այս տեղէն. անկարեւոր են ասենք յիշեալ կաթողիկոսութիւնները կամ հանիկ է ապդեօք բառնալ՝ ի միջոց։ Բաւ լիցի. մենք կարող չենք այս տեսակ հետեւութիւն առնել։ քանի որ նոյն կաթողիկոսութեանց տեղը փոխարինելու ուրիշ բան չունինք։ Ուրեմն պիտի ընդունենք. որ կարեւոր են մեր ազգի ներկայ վիճակին նկատմամբ։ բայց կարեւոր են իրենց բուն կոչմանը վերադարձելով և ոչ թէ այժմեան խաղաղ վիճակի մէջ մնալով։ Թէ ինչ է այս կարեւորութիւնը և բուն կոչման վերադարձիլը՝ պարզենք այն կէտը։

digitised by A.R.A.R.@

Աղթամարայ և Այց կաթողիկոսութեանց գոյութիւնը կարեւոր է քանի՞ մի պայմաններով։ Դիպ՝ ինչպատմական հանգամանքներէ որ յայտագրի ելեալ են։ այս կաթողիկոսութիւնները՝ ազգային վիճակը, համարեա թէ տակաւին նոյն հանգամանքներուն տակն է։ այն է քաղաքական երկրային կամ ազգային ամբողջութիւն չառնելնալը։ սարքեր քաղաքական հաստատեալ ենթակայ գանալ։ եւ կեղեցական վարչութեան օրինաւոր հաղորդակցութեան դժուարութիւնները և այլն։ Երկրորդ՝ որ Աթոռ տեան ընդհանուր կաթողիկոսութիւնը իրաւ իւր ընդհանուր նշանակութեան վիճակին մէջ չէ։ որ է ամենն հայ յաքնակ աէրութեանց պաշտպանութեան ներքեւ երաշխաւորեալ գիրք ունենալ։ այսպէս՝ ի հնումն։ առանց մանաւորապէս մէկուն հպատակելու։ որպէս զի ընդհանուր Աղգի բարօրութեան և եկեղեցւոյ անդորրութիւն հաստատ կարենայ իւր տեսչութիւն դուակ հաստին վրայ տարածել։ անկասկած գիրք ունենալով ամենն տէրութեանց առջև։ կաթողիկոսական ընդհանուր խարհրդարանի մէջ ամենն երկրի Հայոց կողմէն երեսփոխանական կամ ժողովական անդամներ ունենալ։ և այլն և այլն։ Երրորդ՝ Աղգը երկար դարերէն ի վեր վարժած է Այց և Աղթամարայ կաթողիկոսութեանց գոյութիւնը եւ խիստ անակնոնելի շփոթութիւններ կարող են յառաջ գալ բարձրութիւն։ և բովիհետեւ ժողովուրդը մոստնուած լինելով անկրթութեան համարեա թէ լոկ բնազդմամբ և աւանդական կամ ականատես տվեալութիւնք կ'ապրի։ Իւ չորրորդ՝ տեղական ժողովրդի վիճակը աւելի դիւրին է տեղական մերձաւոր տեսչութեան օրինաւոր հսկողութեամբ բարութիւն, քան թէ հեռաւոր երաշխիներով պատրել, և ահա այս պատճառաւ յիշեալ կաթողիկոսութեանց գոյութիւնն կարեւորութիւնը խոստովանելն ինչի՞ հարկ է ասելու։ բաւ բուռն կոչմունք վերածեալ։ Հարկ է կաթողիկոսական հրահանգ պատրաստելու։ որպէս զի հաստատ պայմանները լինին տեսչական ժողովրդի մէջ բարոյական և մտաւորական քայլ ծառայել։ կաթողիկոսական խարհրդարի կազմելու։ ուր ամենն գիտակցութիւններ։ նոր խորհրդին տարր ի կիր առնելու։ և այդմանագրեալ թիւնքը ազգային հանգիստից միջոցաւ հաղորդութիւն ի գիտութիւն Աղգին։ որպէս զի հասանի Աղգը տեղեկութիւն ունենալ։ իւր կաթողիկոսութեանց վիճակին վրայ։ և այսպէս ազգային վիճակի գիտութիւնը ամենն Հայ անհատի համար ծանօթ գիտութիւն դառնայ։ կաթողիկոսական վիճակաց ազգային տեղեկանութիւնքը և վանքերը իրենց գոյքերով և կալուածներով ի համար առնուին և հասարակաց գիտութեանը հաղորդուին։ որպէս զի իւրաքանչիւր կաթողիկոսի կամ վանահօր օրոնի պակասքը կամ յաւելեալը իմացուի։ Այս կէտը ամենակարեւոր է նոյն քանի՞ սաղմնորդութեանց նկատմամբ։ որոց վրայ առանձինն պիտի խօսինք։ Այս զանազանութիւնէն է որ շատ ազգային սաղմնաւորներ մանաւորապէս անձերու ազատութեանը կերպարանք կը լինին։ Աղգը ամենեւին տեղեկութիւն չառնիր և նաեւ շատ վանքերու և եկեղեցեաց գոյքեր և ոստաններ յափշտակուեցին յեւոյ միայն կը հրատարակուի թէ այս ինչ վանուց մէջ այս ինչ իրերն ինչ եղած են։

Եւ որպէսզի առնուազն ասնուազնիւ. հրապարակագիր պարտաւորութեան և հասանելութեան պարտականութիւնքը Աղգային Վարչութեան կը վերաբերի եւ Աղգային Վարչութեան տակ լով կը հան

digitised by A.R.A.R.@

կանանք մենք Սահմանադրութեան բուն սկզբունքին համեմատ կազմուած Հրեափոխանական և այլ ժողովները և ոչ թէ այն առօրեայ եպիսկոպոսական, վարդապետական և կամ խառն ժողովները, որոց վրայ շարունակ դատքն նախանձութիւններ կը տեղան յամենատուէք և սակայն ամենայն ինչ ցաւալի վիճակի մէջ են և կը մնան, ուստի առ այժմ ազգային խնդիրներէն կարեւորագոյնն է Սահմանադրական վարչութեան վերակազմութեան խնդիրը, որով միայն կարելի է լուծել և միւս խնդիրները և կանոնաւորել այն յաբարութեան պայմանները, որք յոգակարգ սիրոյ համարուին ժողովրդի և կաթողիկոսութեանց մէջ և որոց վրայ կարեւոր կը համարինք քանի մի խօսք ասել, ինչպէս խոստացանք, եւ վերջաւորել ներկայ հատուածս տեսութիւնը։

Շատ անգամ կրկնուած է թէ՝ Սահմանադրութեան բուն ոգին արգարացնելու համար, անշուշտ պէտք է որ Հրեափոխանական ժողովին մէջ, ինչպէս միւս գաւառական ազգայնոց նոյնպէս և Այս ու Ղրիմամարայ կաթողիկոսական թեմերու ներկայացուցիչները գտնուին։ Այս հիմանց վրայ կազմուած Ազգային Պարչութեան համար ինքնին կը դիւրանայ յիշեալ կաթողիկոսութեանց յարաբերութիւնները։ Այն կաթողիկոսութիւնները ուղղակի Ազգային Պարչութիւն պատասխանատուութեանը կ'ենթարկին, կաթողիկոսական ընտրելիները կ'որոշուին տեղական ժողովրդէն և կը ներկայանան Հրեափոխանական ժողովին, ուր վերջնական ընտրութիւնը կը կատարուի և օծման ու հաստատութեան հրամանը կը տրուի։ Այս ճանապարհաւ նոյն կաթողիկոսական Թառները կը պարտաւորին սերտ յարաբերութիւն ունենալ Ազգային Պարչութեան հետ, պահանջել՝ ինչ որ իրաւունք ունին պահանջելու, հաստատցուցանել՝ ինչ որ պարտաւոր են հաստատցուցանելու։ Իսկ երբեք կաթողիկոսութեանց առ միմեանս ունեցած յարաբերութիւնները ըստ բարոյական միայն կարեն լինիլ։ Ընդհակառակը կարող են սիրով իրարու հետ թղթակցիլ և զիրար քաջալերել հայրապետական գործառնութեանց չմեծ ապարիսին մէջ, իրարու թիկունք լինիլ արտաքուստ վտանգ ստացուցած ժամանակ, ժողովրդի կրօնական և ազգային միութիւնը հոգևոր կապը ջնջալ սաստանալ, սիրել և սիրուիլ, ծառանալ և հաշտուիլ, գործել և գործակցութեան հրաւիրել ամենքը գործել Ազգի և Եկեղեցւոյ շինութեան և ժողովրդի բարոյական և մտաւոր յառաջդիմութեան համար։

Իրանի թէ Ազգը իւր ամենամեծ օգուտը հասկանալով Թոնդեր Կիրակոսի և Արկոսի անձնական խնդիրները և օր առաջ ջանար ազգային Սահմանադրութիւնը գործադրել, Ազգային Պարչութեան հաստատուն վերակազմութեան համար աշխատիլ, և ապա ձեռնամուխ լինէր այն խնդիրները լուծել, որոնք ցարդ անկանոն ճանապարհաւ կը յուզուին վարչապար և անլուծանելի կը մնան։

Այս է մեր նպատակը կաթողիկոսական խնդրոց նկատմամբ, և այս է մեր խորհուրդը զոր կ'առաջարկենք Ազգին։

---

digitised by A.R.A.R.@